ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ (1828—1829 ԹԹ.)

Մ. Ղ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

1826—1828 ԹԹ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց ռուսների հաղթանակով։ 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի հաշտության պայմանագրով Ռուսաստանին անցան Երևանի և Նախիջևանի խանությունները, որոնք մարտի 21-ի կայսերական հրամանագրով վերանվանվեցին Հայկական մարզ։

Թուրք-պարսկական բռնակալների վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով հայաթափ էին եղել ոչ միայն Հայաստանի ծայրագավառները, այլև՝ Արարատյան աշխարհը։

Հայկական մարզում, Ի. Շոպենի անցկացրած կամերալ ցուցակագրության (մարդահամարի) տվյալներով, Ռուսաստանին միանալու նախօրեին մարզի 1.111 գյուղերից բնակեցված էր միայն 752-ը[1]։ Արարատյան դաշտը հայերից դատարկվեց նաև 1827 թ. սկզբին, երբ ռուսները նախապատրաստվում էին արշավելու Երևանի վրա։ Սարդարը համոզված լինելով, որ հայերն օգնելու են ռուսներին, նրանց բռնությամբ տեղահան արեց և քշեց Արաքսի աջ ափը[2]։

Արևելյան Հայաստանը հայերով վերաբնակեցնելու և հայությունը համախմբելու գործում հատկապես բախտորոշ նշանակություն ունեցավ Թուրքմենչայի դաշնագրի 15-րդ հոդվածը, որով ազդարարվում էր. «Նորին Մեծության Շահը դրդված իր տերությունում խաղաղությունը վերականգնելու և իր հպատակներից այն ամենը հեռացնելու բարերար ու փրկարար մտադրությամբ, ինչը կարող է էլ ավելի մեծացնել պատերազմի բերած աղետները, պատերազմ, որն այնքան հաջող ավարտված է սույն պայմանագրով, Ադրբեջան[3] կոչվող մարզի բոլոր բնակիչներին և աստիճանավորներին շնորհվում է բացարձակ ու կատարյալ ներում։ Նրանցից ոչ ոք, ինչ աստիճանակարգի էլ պատկանելիս լինի, չի կարող պատերազմի կամ ռուսական զորքերի կողմից հիշյալ մարզի ժամանակավոր գրավման ընթացքում իր արտահայտած կարծիքների, արարմունքների կամ վարքի համար ենթարկվել հետապնդման, ինչպես նաև վիրավորանքի։ Բացի դրանից, այդ աստիճանավորներին և բնակիչներին կտրվի, այսօրվանից հաշված, միամյա ժամանակամիջոց, որպեսզի նրանք իրենց ընտանիքներով հանդերձ կարողանան Պարսկական մարզից ազատ անցնել ռուսական մարզերը, որպեսզի կարողանան դուրս կրել և վաճառել (իրենց) շարժական գույքը, առանց հանդիպելու կառավարության կամ տեղական իշխանությունների կողմից հարուցված որևէ արգելքի։ Այդ անձանց կողմից վաճառվող կամ դուրս տարվող գույքն ու իրերը չպետք է ենթարկվեն որևէ մաքսի կամ հարկի։ Իսկ անշարժ գույքի նկատմամբ սահման-

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, СПб, 1852, стр. 519.

[2] *Ալ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիզ, 1894, էջ 309։*

[3] *Այսուհետև՝ Ատրպատական։*

վում է հնգամյա ժամանակամիջոց՝ այն վաճառելու կամ նրա վերաբերյալ կամայական կարգադրություն անելու համար։ Այս ներումը, սակայն, չի տարածվում այն անձանց վրա, որոնք մինչև միամյա ժամանակամիջոցը լրանալը կդործեն դատական պարտքի ենթակա որևէ հանցանք կամ ոճիր»[4]։

Այն ժամանակից սկսած, երբ ռուս-պարսկական պատերազմի ելքը գրեթե վճռված էր, Արևելյան Հայաստանի վերաբնակեցումը դարձավ ինչպես ռուսական կառավարության, այնպես էլ հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների մտահոգության առարկան։ Պարսկահայերը ռուսական տիրապետության տակ անցած հայկական բնակավայրեր գաղթելու ցանկություն էին հայտնել դեռևս 1817 թ., երբ գեներալ Երմոլովը գտնվում էր Պարսկաստանում։ Հայերի ներգաղթ կազմակերպելու նպատակով 1827 թ. մայիսին, Ներսես Աշտարակեցու խորհրդով, Պասկևիչը գեներալ Դիբիչից պահանջում է «հատուկ հանձնարարությամբ» Հայաստան ուղարկել ցարի թիկնապահ գնդում ծառայող գնդապետ Եղիազար Լազարյանին։ Այդ ընտրությունը պատահական չէր, քանի որ Պասկևիչը ցանկանում էր իր տրամադրության տակ ունենալ այնպիսի հայ աստիճանավորներ, որոնք «վայելում էին ինչպես կառավարության վստահությունը, այնպես էլ հեղինակություն հայ ժողովրդի շրջանում»[5]։ Եթե Պասկևիչը ձգտում էր իր նվաճած երկրամասը ցարիզմի համար դարձնել ավելի եկամտաբեր ու շահավետ, ապա Ներսես Աշտարակեցին 1827 թ. հոկտեմբերի 6-ին Լազարյանին գրած նամակում այն միտքն էր հայտնում, թե Հայաստանի փրկությունը միայն այն ժամանակ կլինի առարկայական, եթե Արարատյան աշխարհը, Նախիջևանը և Փայտակարանը բնակեցվեն հայերով։ Նա միաժամանակ Եղիազար Լազարյանին խորհուրդ էր տալիս Ռուսաստանին անցած գավառներում բնակեցնել ոչ միայն Ատրպատականի, այլև Պարսկաստանի մյուս գավառներում և քաղաքներում ապրող հայերին[6]։

Ցարական կառավարությանը սակայն ձեռնտու էր, որ տնտեսական ու ռազմական մեծ նշանակություն ունեցող այս նոր երկրամասի նորաբնակները լինեին ռուսներ՝ իբրև ավելի հուսալի տարրեր։ Եվ իրոք, սկզբում Պասկևիչը մտադիր էր Ուկրաինայից 20 հազար ընտանիք կազակներ գաղթեցնել և բնակեցնել Արաքսի ռուսական ափին[7]։ Սակայն քանի որ վերջինս կապված էր մեծ ծախսերի հետ, իսկ նրա իրականացման համար երկար ժամանակ էր պահանջվում, հիշյալ ծրագրի իրացումը հետաձգվում է մինչև XIX դ. 40-ական թվականները։

Կազակների վերաբնակեցման նախագծին հակառակ, Խաչատուր Լազարյանը, Ալեքսանդր Խուդաբաշյանը և Կոստանդին Արղությանը 1827 թ. վերջերին և 1828 թ. սկզբներին կազմում և արքունիքին են ներկայացնում «Մի քանի ենթադրություններ Վրաստանի և նրան սահմանակից մարզերի մասին»[8]

4 «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 71—72։

5 С. Глинка. Описание переселения армян азербайджанских в пределы России, М., 1831, стр. 97.

6 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), Ն. Աշտարակեցու դիվան, թղթ. 166, վավ. 882, թ. 69ա—բ։

7 ՍՍՀՄ կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ԿՊՌՊԱ), ֆ. ՌԳԱ— գ. 923, թ. 1—16։

8 Մատենադարան, Լազարյանների դիվան, թղթ. 106, գ. 51, վավ. 92—96, նաև Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 140—153։

խորագրով մի ուրիշ նախագիծ, որով վերստին քննության առարկա էին դարձնում Ռուսաստանի հովանավորության տակ Հայաստանի քաղաքական ինքնավարությունը վերականգնելու, սահմանների պաշտպանության և հայերի ներգաղթ կազմակերպելու հարցերը։ Թե կառավարությունը ինչպես է ընդունել և ինչ ընթացք տվել հիշյալ ծրագրին, անհայտ է, բայց պիտի կարծել, որ ինչ-որ հույսեր տրվել են, այլապես դժվար թե պետերբուրդյան անցուդարձերին լավատեղյակ Ներսես Աշտարակեցին՝ Դեհկարխանի բանակցությունների ժամանակ և դեռ պատերազմը չավարտած, պաշտոնապես գիմեր Պասկևիչին՝ պարսկահայերի գաղթ կազմակերպելու առաջարկությամբ։ 1828 թ. հունվարի 25-ին Պասկևիչը նրան պատասխանում է, որ գաղթելու թույլտվություն ստանալու համար իրեն դիմած և Ատրպատականում ապրող հայերի ու ասորիների ներկայացուցիչներին ինքը դրական պատասխանով վերադարձրել է տեղերը, որպեսզի գաղթի նախապատրաստվեն։ Սա Ներսես Աշտարակեցուն գործելու ավելի լայն հնարավորություններ է ընձեռում, և նա անհապաղ պարսկահայերին գաղթի հորդորելու, ինչպես նաև մայր Աթոռի անունից որոշ հույսեր տալու նպատակով Ատրպատական է առաքում Ստեփան եպիսկոպոս Ենոքյանին ու Նիկողայոս վարդապետին[9]։ Նման հանձնարարություն է ստանում նաև Ատրպատականի հոգևորականությունը՝ թեմի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսի գլխավորությամբ։ Սրանից բացի, Աշտարակեցին հարյուրավոր նամակներ է հղել գնդապետ Լազարյանին և Ատրպատականի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներին, որոնց մեջ կշտամբում էր այն հայերին, որոնք տատանվում կամ դժվարությամբ էին բաժանվում իրենց «մուլքից» և այն բարձր դասում Ռուսաստանի հպատակներ դառնալուց. «...Բայց դուք որ մարդ եք, քրիստոնեայ էք՝,— գրում էր նա,— դուք ևս լաւ գիտեք, որ մուլքն մարդոյ համար է ստեղծուած, այլ մարդն մլքի համար չէ ստեղծուած, գիտեք և այն որ մարգն ամեն տեղ կարող է մուլք շինել, ամա մուլքն չէ կարող զիւրն տեր մարդ շինել... Դուք ձեզ անողորմ մի լինիք և խնայելով ձեր մարմնոյն և հոգւոյն և որդւոցն և զաւակացն ձեր մուլքն ու ցանքն ղուրպան արէք ձեզ և օր առաջ վեր կացէք դուրս եկէք, մտեք ի ներքոյ հովանաւորութեան ռուսաց ամենաողորմած թագաւորի և ազատեցէք զանձինս ձեր յաղքատութենէ և յամենայն ողորմութենէ ձերմէ և յահէ, երկիւղէ բռնավոր պարսից»[10]։

1830 թ. հունվարի 30-ին խոյեցի մեծահարուստ Մարգար Եղիազարյանին գրած նամակում Աշտարակեցին հայերի պարսկական դարավոր գերությունից ազատագրվելը և Ռուսաստանի հովանու ներքո Արարատյան աշխարհում համախմբվելը համարում է «դարագլուխ երևելի ամենայն ազգի հայոց, որք ամենայն սահմանս Ատրպատական աշխարհի, և գործք ժամանակաւորաց՝ այսոցիկ մնալոց են մեզ ամենեցուն արձան հիշատակի բարեաց մերոց...»[11]։

Թուրքմենչայի պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո Եղիազար Լազարյանը նշանակվեց Ատրպատականի հայերի գաղթի հանձնաժողովի նախագահ։ Նրան պաշտոնապես հանձնարարվեց պայմանագրի 15-րդ հոդվածի սկզբունքների իրականացումը։ Հետագա բոլոր թյուրիմացությունները կան-

---

9 Մատենադարան, Ն. Աշտարակեցու դիվան, թղթ. 167, վավ. 244։

10 Նույն տեղում, վավ. 1099, թ. 38ա—բ։

11 Նույն տեղում, վավ. 1032։

խելու համար նա խնդրում և 1828 թ. փետրվարի 26-ին Թավրիզում Պասկևիչից ստանում է 19 կետից բաղկացած մի հրահանգ՝ կառավարության կողմից գաղթականներին տրվող իրավունքների և արտոնությունների մասին։ Ըստ այդմ՝ գաղթելու իրավունք ունեին միայն Ատրպատականի քրիստոնյաները, որոնք պետք է բնակվեին Երևանի, Նախիջևանի, մասամբ էլ Ղտրաբաղի անմարդաբնակ գյուղերում։ Կարիքավոր գաղթականներին օգնելու նպատակով Պասկևիչը հատկացրեց 25 հազար ռ.՝ ընտանիքին մոտ 10 ռ.։ Նոր բնակավայրերում գաղթականները վեց տարի ազատվում էին հարկերից և 3 տարի՝ պարհակներից[12]։ Փետրվարի 29-ին Պասկևիչը համանման բովանդակությամբ տասնհինգ կետից բաղկացած հրահանգ ուղարկեց նաև Երևանի ժամանակավոր վարչությանը, որտեղ մատնանշված էին Երևանում ստեղծվելիք Գաղթականական կոմիտեի անմիջական պարտականությունները։ Ըստ այս հրահանգի՝ կոմիտեն պարտավոր էր իր ներկայացուցիչներն ուղարկել Նախիջևան (մինչև այստեղ գաղթողներին հասցնելու էին Լազարյանն ու նրան ենթակա սպաները), դիմավորել գաղթականներին, ուղեկցել նրանց նոր բնակավայրերը, որտեղ հայերը բնակեցվելու էին ամբողջական գյուղերով։ Հանձնարարված էր կալվածատիրական հողերում ու մահմեդականներով բնակեցված գյուղերում նոր մարդիկ չբնակեցնել, իսկ եթե հայաբնակ գյուղերն ունեին հողի ավելցուկ և համաձայն էին իրենց համայնքի մեջ ընդունել նոր տնտեսություններ, խոչընդոտներ չէր հարուցվում[13]։

1828 թ. ապրիլի սկզբին Հայկական մարզային վարչությանը կից ստեղծվեց Գաղթականական կոմիտե, որի նախագահն էր Ղրիմյան հետևակային գնդի մայոր Վլադիմիրովը, իսկ Նախիջևանի բաժանմունքի նախագահ նշանակվեց 40-րդ Եգերյան գնդի շտաբս-կապիտան Նևերովսկին[14]։ Լազարյանին կարգադրված էր՝ նախ գաղթեցնել Մարաղայի և Սալմաստի հայերին, որտեղից ռուսական զորքերն ամենից շուտ էին դուրս գալու։ Մարաղայի հայերի գաղթը ղեկավարում էին կոլեգիական ասեսոր Ղամազյանը և շտաբս-կապիտան Վոյնիկովը, Թավրիզի հայերի գաղթը՝ փոխգնդապետ Մովսես Արղությանը։ Ըստ հրահանգի՝ գաղթել թույլատրվում էր ամբողջ գյուղով կամ 150—300 ընտանիքից բաղկացած խմբերով, որոնց ուղեկցելու համար նշանակվում էր մեկ սպայից և 2—5 զինվորից բաղկացած պահակախումբ։ 1828 թ. մարտի 12-ից սկսվեց պարսկահայերի գաղթը։ Առաջինը գաղթեցին Ուրմիայի Կարավերան գյուղի հայերը[15]։ Գաղթողներից շատ քչերը սայլեր ունեին. տղամարդիկ շալակած տանում էին բեռները, կանայք՝ երեխաներին։

Պարսկական կառավարությունը թեև Թուրքմենչայի պայմանագրով պարտավորվել էր թույլ տալ քրիստոնյաներին ազատ ու անարգել գաղթելու ռուսական մարզերը, բայց չէր կարող անտարբերությամբ դիտել, թե գյուղերն ու քաղաքները մեկը մյուսի հետևից ինչպես էին դատարկվում աշխատասեր հայերից։ Ուստի, նա թշնամական դիրք բռնեց գաղթի նկատմամբ և բոլոր միջոցները գործադրեց խափանելու այն, իսկ Մարաղայում՝ կազմակերպեց

12 Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎԿՊՊԱ), ֆ. 1105, ց. 1, գ. 55, թ. 16—19։

13 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. ՌԳԱ, գ. 978, թ. 5—9։

14 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 1989, թ. 141—142։

15 Նույն տեղում, թ. 167։

ղինված քրդերի հարձակումը գաղթողների և նրանց ուղեկցող կազակների վրա[16]։

Ատրպատականի հայության որոշ մասը անշարժ կալվածքներն ու գույքը կորցնելու վտանգի պատճառով երկընտրանքի մեջ էր ընկել։ Ճիշտ է, հայերն իրավունք ունեին վաճառելու իրենց կալվածքներն ու տները, բայց պարսկական կառավարությունը գաղթը խափանելու նպատակով գավառներ ուղարկված աստիճանավորների միջոցով պարսիկներին արգելեց գնել գաղթողների գույքը, իսկ գնվածներն էլ հրամայեց վերադարձնել։

Աբբաս-Միրզան և նրան շրջապատող պարսիկ խաներն ու անգլիական դիվանագետները բոլոր միջոցները գործադրեցին, որպեսզի դադարեցնեն հայերի գաղթը։ Թագաժառանգի և դեսպան Մակդոնալդի խորհրդով հայաբնակ դյուղեր մեկնեցին անգլիական դիվանագետներ Մոնտիսը, Վիլոքը, Շիին, Ֆրանսիացի Սեմիոնն ու պարսիկ աստիճանավորները՝ տեղում ստուգելու, թե գաղթականների նկատմամբ ռուսները արդյո՞ք բռնություն չեն գործադրում։ Համոզվելով, որ հայերը գաղթում են սեփական ցանկությամբ, նրանք սկսեցին զրպարտություններ տարածել ռուսների հասցեին։ Այդ կապակցությամբ 1828 թ. ապրիլի 2-ին Եղիազար Լազարյանը Պասկևիչին գրում է. «Ուրմիայում իմ գործողությունների դեմ հանդիպեցի բազմաթիվ արգելքների և լսեցի անհեթեթ լուրեր մեր մասին, որոնք տարածում է պարսկական կառավարությունը։ Գաղթականներին ահաբեկելու համար նրանց համոզում են, որ Արտքսի այն կողմում նրանց սպասում է վատ կլիմա, սով և որ թագավորի հպատակները վաճառվում են»[17]։ Անգլիական դիվանագետների վերոհիշյալ քայլերի նպատակն էր խոչընդոտել Ռուսաստանին՝ ամրապնդելու իր դիրքերն Անդրկովկասում և Մերձավոր ու Միջին Արևելքում։ Աբբաս-Միրզան նույնիսկ Լազարյանի մոտ է ուղարկում Մահմեդ Թագիր խանին, խնդրելով, որ նա հայերին չհրապուրի, չահաբեկի և չհարկադրի գաղթել[18]։ Մահմեդ Թագիր խանը Լազարյանին հայտնում է, որ ինքը ճանապարհին հանդիպել է Ուրմիայի գավառի Ջամալու, Կարիզ, Գյուլինաղ, Սկատլու և Լուլուստոա գյուղերի 200 ընտանիքից բաղկացած հայերի խմբի, որոնց իբր բռնությամբ են գաղթեցնում։ Դա ստուգելու համար Լազարյանն անմիջապես դիմում է Ուրմիայի Ասկյար խանին, որ վերջինս իր որդուն ուղարկի այդ հայերին հարցաքննելու։ Հայերը պատասխանում են. «Մեզ լավ ևս է ուտել ղխոտ ռուսաց, քան զհաց պարսից»[19]։

Չնայած Աբբաս-Միրզայի, պարսիկ խաների, անգլո-ֆրանսիական դիվանագետների և Ատրպատականի հայության առանձին ներկայացուցիչների (Իսրայել եպիսկոպոս, Նազար Շահնազարյան) հարուցած բազմաթիվ արգելքներին, Լազարյանի, Արղությանի, գաղթի հանձնաժողովի անդամ մյուս սպաների, Բարսեղ եպիսկոպոսի, Էջմիածնի Նվիրակներ Ստեփան եպիսկոպոսի, Նիկողայոս վարդապետի, Ատրպատականում գտնվող ռուսական զորքերի և նրանց հրամանատար գեներալ Պանկրատևի ջանքերով ու եռանդով հիմնա-

16 Նույն տեղում։

17 «Акты, собранные Кавказскою археографическою комиссиею» (այսուհետև՝ АКАК), т. VII, документ № 570.

18 С. Глинка, նշվ. աշխ., էջ 67։

19 «Նկարագիր գաղթականութեան հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», Մոսկվա, 1832, էջ 44։

կանում 1828 թ., մասամբ 1829 թ. Ատրպատականի Մարաղա, Սալմաստ, Ուրմիա, Խոյ, Մակու, Ղարադաղ և Պարսկաստանի մյուս գավառներից ու Թավրիզ քաղաքից Հայկական մարզ և Ղարաբաղ գաղթեցին մոտ 8 հազար ընտանիք կամ ավելի քան 50 հազար հայեր[20], իսկ ըստ Շոպենի՝ 6.946 ընտանիք կամ 35.560 մարդ[21]։

Ինչպես տեսնում ենք, Շոպենի ցույց տված թվերը զգալիորեն պակաս են, քան մյուսներինը, որը բացատրվում է հետևյալ պատճառներով։ Նախ՝ Շոպենի մոտ չկան Ղարաբաղ գաղթած ավելի քան 700 ընտանիքները, երկրորդ՝ գաղթականներից մոտ 2—3 հարյուր ընտանիքներ չկարողանալով տանել վերաբնակեցման առաջին տարիների դժվարությունները, վերադարձան Պարսկաստան և, վերջապես, գաղթականների մի զգալի մասը՝ ամբողջ ընտանիքներ, անգամ գյուղեր, ինչպես նշում է Շոպենը, զոհ գնացին Հայկական մարզում տարածված համաճարակային հիվանդություններին (ժանտախտ, խոլերա) և անսովոր կլիմային[22]։

Պարսկահայերը բնակություն հաստատեցին Հայկական մարզի՝ Երևանի, Նախիջևանի գավառների և Օրդուբադի օկրուգի 17 մահալների 197 գյուղերում, որից ավելի քան 60-ը հիմնադրեցին իրենք[23]։

Պարսկահայ գաղթականներն Արաքսն անցնելուն պես ընկան ծանր կացության մեջ։ Տեղական իշխանության ներկայացուցիչների անճարակության ու անբարյացկամության հետևանքով գաղթականներն օրերով մնացին բաց երկնքի տակ, առանց սննդի։ 1828 թ. դեկտեմբերի 14-ին Հայկական մարզային վարչության պետ, իշխան Ճտվճավաձեն և Գաղթականական կոմիտեի նախագահ իշխան Մ. Արղությանը Պասկևիչին զեկուցում են, որ «այդքան մեծ թվով գաղթականների համար հարկավոր էր նախօրոք ունենալ ամենաճշգրիտ տեղեկություններ Հայկական մարզի ազատ հողերի մասին, որոնք վարչությունը հնարավորություն չէր ունեցել հավաքել ժամանակի սղության ու աստիճանավորներ չունենալու պատճառով և կարող էր տեղեր ընտրելիս սխալ-

---

20 Պարսկահայ գաղթականների ընտանիքների և բնակիչների թվի վերաբերյալ կան տարբեր, իրար հակասող տվյալներ, որոնք տատանվում են 30 հազարից 100 հազարի միջև։ Լազարյանն իր հաշվետվության մեջ հաշվում է 8.000—8.249 ընտանիք կամ 40 հազար մարդ (С. Глинка, նշվ. աշխ., էջ 112—134)։ Լեոն հաշվում է 45—50 հազար մարդ (Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս Բ, էջ 115—116), իսկ Ատրպատականի թեմի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը՝ 11 հազար ընտանիք (նույն տեղում)։ Ալ. Երիցյանը պարսկահայ գաղթականների թիվը հաշվում է 45—60 հազար մարդ (Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 308, 333)։ Ներսես Աշտարակեցին հաշվում է 8 հազար ընտանիք (Մատենադարան, Ն. Աշտարակեցու դիվան, թղթ. 167ա, վավ. 19)։ Էջմիածնի նվիրակներ Ստեփան եպիսկոպոսը և Նիկողայոս վարդապետը գաղթականների թիվը ընդունում են 10 հազար ընտանիք (Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 578)։ Պարսկահայ գաղթականների թիվը Երևանի հասարակության ներկայացուցիչները 1828 թ. հուլիսին էջմիածնի հոգևոր կառավարությանն ուղղած նամակում խիստ չափազանցրած են ներկայացնում՝ 20 հազար տուն կամ 100 հազար մարդ (Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1877—1912, Թիֆլիս, 1914, էջ 104)։ Շատ ուսումնասիրողներ և ռուսական պաշտոնական աղբյուրներ XIX դ. հայ նահապետական ընտանիքի անդամների միջին թիվը հաշվել են 5 մարդ, մինչդեռ այն 6—7 մարդուց ավելի է եղել։

21 И. Шопен, նշվ. աշխ., էջ 639—642։

22 Նույն տեղում, էջ 1—2։

23 Նույն տեղում, էջ 486—530։

վել. այդպիսի սխալներից էլ տեղի կոմենայինն ամենամահացու հետևանքները գաղթականների համար»[24]։

Անկարող լինելով Նախիջևանի և Երևանի գավառները ժամանած գաղթականներին ապահովել պարենով, մարզային վարչությունը 1828 թ. ապրիլի 14-ի գրությամբ Լազարյանից խնդրում է. «բոլոր նրանց, ովքեր չունեն սեփական միջոցներ պարեն հայթայթելու համար, թողնել տեղերում»[25]։ Պասկևիչին ուղղած զեկուցագրում բողոքելով մարզային վարչության այս հակամարդկային որոշման դեմ, Լազարյանը այդ վիճակից դուրս գալու համար առաջարկում է ավելացնել գաղթականներին տրվող նպաստը։ Նա հավաստիացնում էր, որ իր հայրենակիցների համար կատարված ծախսերը իզուր չեն կորչելու, քանի որ ի դեմս պարսկահայ գաղթականների Ռուսաստանը ձեռք է բերում «նվիրված և աշխատասեր ժողովուրդ, որը հավելյալով կհատուցի պետության բոլոր այժմյան ծախսերը»[26]։

Ինչպես ասվեց, գաղթականներն իրենց անշարժ գույքն ու կալվածքները չկարողացան վաճառել և դատարկաձեռն ճանապարհ ընկան։ Շոպենի վկայությամբ՝ «պարսկական գաղթականներն իրենց հետ փող չեն բերել և բոլորն էլ ծայրահեղ աղքատ են»[27]։

Ծանր էր Ղարաբաղում տեղավորվածների վիճակը. տեղական իշխանության ներկայացուցիչները, ինչպես դրում է Զուբարյովը, ինչ-որ նախապաշարմունքից դրդված աններելի կերպով ճնշում էին հայերին։ Մասնավորելով իր խոսքը Մաբազայից Պարտավ գաղթած հայերի մասին, նա ավելացնում է, որ «չունենալով ո՛չ ջուր, ո՛չ կերակուր, բնակվելով բաց երկնքի տակ և ենթարկվելով կիզիչ տոթին, չարաբախտ հայերը մահվան զոհ գնացին։ Երեք ամսվա մեջ 1012 հոգի մեռան... Շրջակա վաչկատուն թուրքերը օգուտ քաղելով նրանց հիվանդությունից, թալանեցին նրանց բոլոր գույքը և տավարը»[28]։ Գաղթականների համար անելանելի կացություն ստեղծվեց նաև Նախիջևանում ու Օրդուբադում, որոնց կառավարիչները՝ էքսան խանը, նրա եղբայր Շիխ Ալի բեգն ու մյուս թուրք, պարսիկ կալվածատերերը զավթել էին բազմաթիվ գյուղեր, Պարսկաստան փախած խաների հողերն ու տները և գաղթականներին արգելում էին բնակվել այդ հողերի վրա։ 1829 թ. հուլիսի 20-ին Նախիջևանում բնակված 30 գաղթականներ էքսան խանի ապօրինությունների մասին Պասկևիչին դրում էին. «Զերդ պայծառափայլութեան բաւական հայտնիք են մերս գաղթական նորեկ հայոց ի մէջ այս երկու ամաց պատահեալ անյաջողութիւնք, թէ տեղափոխութեամբ, թէ օդոց անընդունելիութիւն և թէ ի սեպական կալուածոց և կայից կորստեամբ և ի վերա ամենայնի նաչալնիկաց և չինովնիկաց մեր աղիական բարուց և լեզուի անծանոթութիւնք զանազան մեզ պատահել նեղկրութիւնք»[29]։ Մի այլ աղերսագրում նրանք բողոքում էին էքսան խանի և Շիխ Ալի բեգի չարաշահումների դեմ, որոնք անտեսելով գաղթականներին շնորհած արտոնությունները, պահանջում են հարկեր վճարել ավելի մեծ չափերով, քան վճարել են պարսիկների

24 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2237, թ. 21։
25 АКАК, т. VII, док. № 586.
26 Նույն տեղում, էջ 612։
27 И. Шопен, նշվ. աշխ., էջ 89։
28 Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 333—335։
29 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2463, թ. 131։

ժամանակ[30], ազգային խտրականություն են դնում գաղթականների ու մահմեդականների միջև և վերջիններիս շահերը ավելի բարձր դասում. «Ամեն գիտէ և այլ ներքոյ դրեալս և ձեռք դնողս և ամենայն ռայեթս,— գրում էին գաղթականները,— դիւան խանիցն շնորհակալ չեք, պատճառ, որ հայ թուրքն ջոկում են, թուրքի խօսքն լսում են, հայ ազգն դիւան խանայ գնալիս խօսքն չեն լսում...»[31]։

Հայկական մարզային վարչության և Գաղթականական կոմիտեի անտեղյակության ու անճարակության հետևանքով գաղթականներին անհիմն կերպով տեղափոխում էին մի գյուղից մյուսը, որի պատճառով նրանք քայքայվում ու աղքատանում էին։ Նման վտանգ էր սպառնում, օրինակ, Ուրմիայից Զանգիբասարի ու Գառնիբասարի մահալները գաղթած 2000 ընտանիքների։ Որոշ ժամանակ հիշյալ մահալների գյուղերում ապրելուց հետո Հայկական մարզային վարչությունը պատճառաբանելով, որ այդ գյուղերը պատկանել են թուրք կալվածատերերին, գաղթականներին առաջարկում է թողնել դրանք կամ հարկատու լինել։ 1828 թ. հուլիսին Պասկևիչը կարգադրեց մինչև հարցի վերջնական լուծումը նրանց չտեղափոխել, սակայն 1829 թ. ամռանը հայերին նորից առաջարկվում է տեղափոխվել լեռնային գյուղեր։ Հուսահատ գաղթականները դիմում են կաթողիկոսին, գրելով, որ տեղափոխությունն իրենց համար կործանում է, իսկ եթե ռուսական կառավարությունը զլանում է գանձարանի հաշվին վճարել կալվածատերերի հողերի արժեքը, ապա «ամենք յօժար եմք յետին մնացեալ կայսն մեր ծախել և նոյն հողերևոց գինն հատուցանել միայն թէ չտեղափոխվել»[32]։

Էքսան խանի կամայականության և սանձարձակության հետևանքով Նախիջևան քաղաքում հարյուրավոր գաղթականներ անապատան թափառում էին փողոցներում, մինչդեռ, ինչպես վկայում է գաղթականների բազմաթիվ բողոքների պատճառով հետաքննություն անցկացնող փոխգնդապետ Օգարյովը, Պարսկաստան փախած խաների և բեգերի Նախիջևանում ու Օրդուբադում գտնվող հարմարավետ տները Էքսան խանը և Շիխ Ալի բեգը կաշառքով տալիս էին տեղի թուրքերին[33]։

Պարսկահայ գաղթականների և տեղի մահմեդականների միջև երկար տարիներ պայքարի առարկա էր դարձել նաև ոռոգելի ջրի հարցը։ Հատկապես Նախիջևանում և Դարալագյազում թուրք կալվածատերերը օգտվելով պարսկական կառավարության ժամանակ ձեռք բերած ժառանգական իրավունքներից, ջուրն ու ջրանցքները դարձրել էին անձնական սեփականություն և գաղթականներին զրկել ջրից, նրանց սովի մատնել։ Այդ մասին հարյուրավոր բողոքներ են գրվել Էքսան խանի, մյուս բեգերի, աղաների դեմ, բայց նրանք մնացել են անպատիժ։ Դարալագյազ գաղթած Մելիք Օհանյանը գրում է. «...այս երեք տարի է ոչ մեք մեր ցանք ենք կերէ, ոչ մեր տավարը դարման կերէ, որովհետև ջուրը Քերիմ բեգին է պատկանում»[34]։

---

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, թ. 136։

32 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 62, վավ. 195։

33 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 2463, թ. 681։

34 Նույն տեղում, թ. 576։

Հայերի գաղթի հետևանքով Պարսկաստանը կրեց 32 մլն. ռ. վնաս[35], իսկ Լաղարյանը ծախսելով ընդամենը 14 հազար չերվոնեց և 400 ռուբլի (արծաթով) գաղթեցրեց 50 հազար մարդ[36]։ Անցյալի հայ և ռուս հետազոտողները պարսկահայերի գաղթին տարբեր գնահատական են տվել։ Ռուս որոշ պատմաբաններ, ռազմական ու պետական գործիչներ (Ս. Գլինկա, Վ. Պոտտո, Շչերբատով, Դիբիչ, Պասկևիչ, Նեսելրոդե, Չերնիշև) պարսկահայերի գաղթը և նրա հետ կապված ծախսերը դիտել են որպես ցարական կառավարության անշահախնդիր զոհողություն, ցարի ողորմածություն հայերի նկատմամբ։ Պասկևիչը, նշելով գաղթի հաջողությունները, զրպարտում էր հայերին, որ իբր նրանք գաղթում են՝ շլացած ռուսական ոսկուց։ Եղիազար Լաղարյանը հերքելով այդ պնդումը, նրան պատասխանում է. «հայերը, հակառակը, զոհաբերում են ամեն ինչ»[37]։ Լաղարյանը հիմք ուներ այդպես պատասխանելու, որովհետև շրջելով Ատրպատականի հայաբնակ գյուղերում, անձամբ ականատես էր եղել, որ գաղթականները Պարսկաստանում զոհաբերում էին հարյուր հազարավոր ռուբլիների հասնող ունեցվածք, իսկ փոխարենը, որպես հատուցում, ստանում պասկևիչյան 10—25 ռ., այն էլ փոխարինաբար և մաս-մաս։ Պասկևիչի ասածները հերքվում է նաև նրա կորպուսում ծառայող և պարսկահայ գաղթականների ծանր վիճակին ականատես դեկաբրիստ Ա. Ա. Բեստուժև-Մարլինսկու՝ իր ընկեր Կ. Ա. Պոլևոյին 1832 թ. դեկտեմբերի 14-ին Դերբենտից գրած նամակով. «Բայց եթե իմանային ինչպես կատարվեց հայերի գաղթը Ատրպատականից, կսարսափեին անգամ քարերը։ Լազրևին հանձնարարված էր Անդրկովկաս կանչել 30.000 հայեր, գտնվեցին մինչև 90.000 ցանկացողներ, և կոմսը թույլ տվեց կանչել այնքան, ինչքան կարող է։ ...Նրանք եկան և չգտան հացի հատիկ, գլուխ դնելու տեղ, ճյուղ՝ կյանք պահպանելու համար։ Ոչինչ չէր պատրաստվել։ Նրանց տվեցին մահացու կլիմա ունեցող անբերրի հող և դրա հետ աննշան դրամական օգնություն, այն էլ մի մասին»[38]։ Պարսկահայերի գաղթի ամենագործուն կազմակերպիչ և մասնակից իշխան Մ. Արղությանը հայերի գաղթի գլխավոր պատճառը համարում է ռուսների նկատմամբ նրանց ունեցած նվիրվածությունը. «Շրջելով Խոյի գավառի գյուղերում,— գրում է նա,— բազմիցս ականատես եմ եղել, թե ինչպես ընտանիքների հայրերը ձեռքերի վրա բարձրացնելով իրենց երեխաներին, ասում էին, որ նրանք պատրաստ են նրանց ևս զոհաբերել, միայն թե ապրեն ռուսական խաղաղ հովանու ներքո»[39]։

Որոշ հայ պահպանողականներ հայերի ռուսական կողմնորոշումը և պարսկահայերի գաղթը խիստ բացասական գույներով են ներկայացրել։ Դրանցից էր Եղիշե քահանա Գեղամյանը։ Խիստ քննադատության ենթարկելով ցարական կառավարության քաղաքականությունն Անդրկովկասում, որի պատճառով, ըստ նրա, Թուրքիայում և Պարսկաստանում խաթարվել էր հայերի անդորրը և կյանքը, Գեղամյանը այն տեսակետն էր զարգացնում, թե իբր պարսկահայերի գաղթի ժամանակ ռուսները Լաղարյանի միջոցով պարսկահայ գաղ-

35 С. Глинка, նշվ. աշխ., էջ 94։
36 Նույն տեղում, էջ 92։
37 АКАК, т. VII, док. № 597.
38 Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 261—262։
39 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2237, թ. 5։

թականների նկատմամբ գործադրել են բռնություն և զինական ուժ[40]։ Ե. Գեղամյանին ձայնակցում էր Մարկոս Աղաբեկյանը[41]։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը և 50 հազար պարսկահայերի գաղթը թե՛ ժամանակակից և թե՛ հետագա հայ առաջադեմ գործիչները գնահատել են որպես հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ամենանշանավոր իրադարձություն։ Ն. Աշտարակեցին, Մ. Թազիադյանը, Հ. Ալամդարյանը, Խ. Աբովյանը, Գ. Պատկանյանը, Ատ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Ալ. Երիցյանը, Վ. Փափազյանը, Հ. Թումանյանը և ուրիշներ բազմիցս նշել են Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու քաղաքական ու տընտեսական կարևոր նշանակությունը։

Բաֆֆին XIX դ. 50—60-ական թվականներին, երբ համեմատաբար դրականորեն էր տրամադրված Պարսկաստանում տիրող կարգերի նկատմամբ, ափսոսանքով էր արտահայտվում իր հայրենակիցների գաղթի մասին։

Հետագայում Պարսկաստանում տիրող կարգերի նկատմամբ Բաֆֆու կարծիքը փոխվեց։ Նա դարձավ Ռուսաստանի ջատագով և գրական արտահայտվեց Հայաստանը Ռուսաստանին միացնելու ու ներգաղթի մասին։ Բաֆֆուն համակարծիք էր Պ. Պռոշյանը, գրելով որ «Արարատյան դաշտը լցվել է հայաբնակ գյուղերով, հիմա Երևանի չորս կողմը հայերի մեծամասնությունն է»[42]։

«Ներկա դարուս մեջ,— գրում է Ալ. Երիցյանը,— ոչ մի քաղաքական անցք այնքան նշանավոր չէ եղած հայ ազգի համար, որքան պարսկական խղճուկ գյուղի մեջ կայացած հիշյալ պայմանագիրը։ Սրա զորությամբ, Հայաստանի սիրտը՝ Արարատյան աշխարհը, յուր նվիրական մայր աթոռով հանդերձ, ընդմիշտ դուրս է դալիս պարսկական լծից և մտնում քրիստոնյա տերության հզոր պաշտպանության ներքո։ Տիրելով այդ սիրտը, Ռուսիան հյուրասիրությամբ բաց էր անում իր դռները այն հայերի համար, որոնք այլևս չդիմանալով դարավոր նեղություններին, հեշտությամբ հրաժեշտ էին տալիս յուրանց ծննդյան վայրերին և հանուն ազատության գաղթում, համախմբվում էին այս նոր ավետյաց երկրում, մոտ՝ իրենց քաղցր Մասիսին և Արագածին...»[43]։

Պարսկահայերի գաղթի շնորհիվ տասնյակ հազարավոր հայեր ընդմիշտ փրկվեցին պարսկական խաների վրեժխնդրությունից, հարստահարումներից, կամայականություններից և ձուլման վտանգից։ Ռուսաստանի հովանավորության տակ, հայկական հինավուրց հողի վրա վերստին համախմբվեց հոծ հայ բնակչություն և Արևելյան Հայաստանի տնտեսական ու մշակութային զարգացման համար ստեղծվեցին լայն հնարավորություններ։

ПЕРЕСЕЛЕНИЕ ПЕРСИДСКИХ АРМЯН И ИХ ПОСЕЛЕНИЕ (1828—1829 гг.)

М. Г. ДАРБИНЯН

Резюме

10 февраля 1828 г. был заключен Туркменчайский мирный договор, согласно которому к России были присоединены Ереванское и Нахиче-

40 Ե. Գեղամյան, Պատմական քաղվածքներ, պրակ 3, Բաքու, 1909, էջ 240։
41 Մ. Աղաբեկյան, Խնդիր կաթողիկոսության ամենայն հայոց, Կ. Պոլիս, 1855, էջ 14։
42 Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1962, էջ 485։
43 Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 308։

ванское ханства. В Восточной Армении накануне ее присоединения к России имелось много обезлюдевших сел и городов. Поэтому заселение Айраратской провинции стало первоочередным вопросом перед царским правительством, армянским духовенством и общественными деятелями.

По пятнадцатой статье Туркменчайского договора всем жителям Атрпатакана предоставлялось право в течение одного года свободно переходить в российские области.

В 1828—1829 гг. более 50 тысяч (8 тысяч семей) человек, жертвуя своим состоянием, оставили персидские пределы и переселились в Армянскую область и Карабах.

По царскому указу от 22 октября 1829 г., переселенцы были освобождены от уплаты налогов на шесть лет, а земских повинностей—на три года, и получили денежное пособие.

Репатриация армян имела большое значение для развития экономики и культуры Восточной Армении и консолидации армянского народа.